«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ. )

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում

*Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել են թվով 147 երեխա:*

*ՆՈՒՅ 0-6 տարեկան 49 սան, որից 33 տղա, 16 աղջիկ:*

*Դպրոց 6-18 տարեկան 85 աշակերտ, որից 56 տղա, 29 աղջիկ:*

*ՄՈՒՅ 15-18 տարեկան 13 սովորող, որից 8 տղա, 5 աղջիկ:*

*Գնահատումները իրականացվել են հայտերի քանակին համապատասխան:*

2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

*Հաշվետու ժամանակահատվածում Շիրակի ՏՄԱԿ-ի կողմից սպասարկվող դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները թվով 760 -ն են (524 տղա և 236 աղջիկ), որից 589 երեխա ստանում են մանկավարժահոգեբանական թիմի աջակցություն Շիրակի ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից:*

*Դպրոցի կողմից հատուկ մանկավարժի աջակցություն են ստանում 31 աշակերտներ, հոգեբանի աջակցություն 528 աշակերտներ, սոցմանկավարժի աջակցություն 18 աշակերտներ, լոգոպեդի աջակցություն 4 աշակերտներ:*

*Տնային ուսուցում ստանում են թվով 2 սովորող Գյումրու թիվ 7 հիմնական դպրոցից, 3 սովորող Գյումրու թիվ 31 հիմնական դպրոցից, 1 սովորող Գյումրու թիվ 10 հիմնական դպրոցից, 2 սովորող Գյումրու թիվ 9 հիմնական դպրոցից , 2 սովորող Գյումրու թիվ 11 հիմնական դպրոցից, 1 սովորող Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցից, 4 սովորող Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցից, 1 սովորող Ողջի միջնակարգ դպրոցից «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ից թվով 87 երեխա (20 հ/դ-20 երեխա, 21 հ/դ-7 երեխա, 29հ/դ- 56 երեխա ,2ա/դ- 4 երեխա):*

*Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմը աջակցություն է տրամադրում ՆՈՒՅ-երի 172 սաների ( 122 տղա, 50 աղջիկ) և ՄՈՒՅ-ների 26 ուսանողների ( 17 տղա, 9 աղջիկ) :*

*ՏՄԱԿ-ում մանակավարժահոգեբանական թիմի աջակցություն են ստացել*

Сканировано с CamScanner

22 երեխաներ ծնողի դիմումի համաձայն.

հոգեբանական աջակցություն-4

լոգոպեդի աջակցություն-13

հատուկ մանկավարժի աջակցություն-5

**3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ**

Հաշվետու ժամանակաշրջանում Շիրակի ՏՄԱԿ-ն իրականացրել է 337 վերապատրաստում, որոնցից 84-ը ՆՈՒՀ-երի, 214 -ը դպրոցների և 39-ը ՄՈՒՀ-ների համար: Վերապատրաստումներին մասնակցել է 4826 մարդ, որոնցից 1207 ՆՈՒՀ-ից, 3056 -ը դպրոցից և 363-ը՝ ՄՈՒՀ-երից էին:

Վերապատրաստումների և դասընթացների թեմաները ներկայացված են ստորև աղյուսակում՝ ըստ մասնակիցների քանակի: Թեմաները ընտրվել են թիրախային խմբերի հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկումների և հարցումների արդյունքում, իսկ որոշ թեմաներ ավելացվել են՝ հիմնված մշտադիտարկումների և գնահատման եզրակացություններից: Դասընթացների արդյունքները շատ նկատելի են դարձել, քանի որ մասնակիցները անմիջապես կիրառել են ստացած գիտելիքները իրենց աշխատանքում և կիսվել են ծնողբերումներով: Դասընթացների միջոցով փոփոխություններ տեղի են ունեցել ոչ միայն ԿԱՊԿ ունեցող սովորողների, այլև բոլոր սովորողների դասին համընդհանուր ներառման հարցում:

Դասընթացները կազմակերպվել են ինչպես ըստ նախնական պլանավորման, այնպես էլ՝ հիմնված հաստատությունների կողմից ՏՄԱԿ ներկայացված հայտերի վրա և ըստ անհրաժեշտության՝ ՀՄԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի շուրջ:

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | ԱՈՒԶՊ-ի / ԱՈՒՊ-ի վարման կարգը | 71 |
| 2 | Կրթության աջակցող միջոցներ.մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 79 |
| 3 | Դրական ծնողավարում | 394 |
| 4 | Բռնությունից և բուլինգից զերծ կրթական միջավայր | 449 |

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| 5 | *Խաղը ներառող միջավայրում:*<br>*Խաղերի հոգեբանական ազդեցությունը և դրանց բացասական հետևանքները երեխաների հոգեհուզական վիճակի և հոգեկան առողջության վրա* | 157 |
| 6 | *Դեռահասների հետ աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները, Դեռահասության առանձնահատկությունները և առողջ ինքնագնահատականը* | 517 |
| 7 | *Վարքային խնդիրներ ունեցող երեխայի հետ հոգեբանական աշխատանքի ուղղությունները,* | 216 |
| 8 | *Հուզական այրում* | 382 |
| 9 | *Ապահով և անվտանգ կրթական միջավայր* | 43 |
| 10 | *ՈՒՀԴ* | 183 |
| 11 | *Ինքնագնահատականի ձևավորում և փոփոխություններ* | 190 |
| 12 | *Ընկալման փոփոխություն. ուսուցիչների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում* | 185 |
| 13 | *Կարիքից բխող այլ թեմաներ* | 1960 |
| | *Ընդամենը* | 4826 |

**4. Խորհրդատվություն**

*Հաշվետու ժամանակաշրջանում Շիրակի ՏՄԱԿ-ն իրականացվել է 2272 խորհրդատվություն, որոնցից 631 -ը ՆՈՒՀ-երի, 1481- ը դպրոցների և 160-ը ՄՈՒՀ-ների մանկավարժների, մասնագետների և ծնողների համար: Խորհրդատվություն է տրվել ընդհանուր թվով 4155 մարդու՝ 1029 ՆՈՒՀ-ի, 2878 -ը դպրոցի և 248-ը՝ ՄՈՒՀ-ների մասնագետների: Խորհրդատվությունների թեմաները համապատասխան մասնակիցների քանակով ներկայացված են ստորև:*

Сканировано с CamScanner

Ծնողները փաստում են, որ խորհրդատվություններից հետո վերանայել են իրենց վերաբերմունքն ու արարքները, շատ հարցերի այլ մոտեցում են ցուցաբերում և ավելի են գնահատում ուսուցիչների և մասնագետների աշխատանքը: Ծնող-ուսումնական հաստատություն-ՏՄԱԿ համագործակցային աշխատանքի բարելավումը ակնառու է համապատասխան թեմայով խորհրդատվություններից հետո: Ծնողների պատշաճ իրազեկումը տվել է իր դրական արդյունքը: Խորհրդատվությունները ուսուցիչներին հեշտացրել են աշխատանքը ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ:

| ՀՀ | Խորհրդատվության թեմա | Խորհրդատվությունների թիվը/ հատ | Խորհրդատվություն ստացած անձանց թիվ |
|---|---|---|---|
| 1 | Գնահատման կարգի վերաբերյալ | 92 | 95 |
| 2 | Միջավայրային և խելամիտ հարմարեցումներ | 134 | 211 |
| 3 | ՏՄԱԿ-ՆՈւՀ-ծնող համագործակցություն | 203 | 304 |
| 4 | ՏՄԱԿ-Դպրոց-ծնող համագործակցություն | 353 | 679 |
| 5 | ՏՄԱԿ-ՄՈւՀ-ծնող համագործակցություն | 28 | 46 |
| 6 | ԿՁԱՊԿ ունեցող երեխաների հետ տարվող ընթացիկ աշխատանքներ | 54 | 110 |
| 7 | ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ տարվող ընթացիկ աշխատանքներ | 162 | 364 |
| 8 | Դասապրոցես. սկզբունքներ, մեթոդաբանություն | 278 | 362 |

Сканировано с CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| 9 | ՆԴ պարպմունքների սկզբունքներ, մեթոդաբանություն | 64 | 86 |
| 12 | ԱՈՒՉԴ-ի վերաբերյալ | 150 | 251 |
| 13 | ԱՈՒԴ-ի վերաբերյալ | 559 | 1329 |
| 9 | Կարիքից բխող այլ թեմաներ | 195 | 318 |
| 10 | Ընդամենը | 2272 | 4155 |

**5. Մշտադիտարկում**

*Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 117 մշտադիտարկում / 70 դպրոց, 35 ՆՈւՀ, 12 ՄՈւՀ /: Մշտադիտարկումները եղել են կառուցողական և արդյունավետ, որի ժամանակ կատարվել են դիտարկումներ ԱՈՒՉԴ-ով և ԱՈՒԴ-ով սահմանված նպատակների ձևակերպումների հետ կապված: Մշտադիտարկման ժամանակ քննարկվել են ԿԱԴԿ ունեցող երեխաների կրթական առաջընթացների, ուսումնական, կրթական, խելամիտ հարմարեցումների, ուսումնական գործընթացում առկա խոչընդոտների վերացման և աշակերտներին ներգրավելու վերաբերյալ հարցերը: Արձանագրվել են բոլոր դիտարկումները, որոնք ուղղված են եղել ինչպես մասնագետներին, այնպես էլ ուսուցիչներին:*

*Մշտադիտարկում է իրականացվել հետևյալ ուղղություններով.*

- ***ԿՉԱԴԿ/ԿԱԴԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում***
- ***Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում***
- ***Հաստատության հոգեբանի գործունեությունը,***
- ***Ուսումնական գործընթացի ներառականություն***
- ***Հաստատության հոգեբանի գործունեությունը***
- ***Ծնող-ուսումնական հաստատություն-ՏՄԱԿ համագործակցությունը:***

Сканировано с CamScanner

6. **Մեթոդական նյութեր**

*Ձեռնարկներ և տեխնիկաներ.*

- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՍՏ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

*Նոր դասընթացներ.*

- «Խաղ և ծնողավարում անվտանգ ու ապահով միջավայրում»
- «Մասնագիտական կողմնորոշում»
- «Քննադատական մտածողություն»
- «Սովորած անօգնականությունից գիտացված լավատեսություն»
- «Ագրեսիվ վարքը նախադպրոցական տարիքում»
- «Քննադատական մտածողություն կամ ինչպե՞ս խուսափել կոգնիտիվ խեղաթյուրումներից և իռացիոնալ դիրքորոշումներից »

*Նոր խաղեր*

- Հետաքրքիր լոտո
- Գտիր զույգը
- Գտիր ստվերը
- Զարգացրու հիշողությունդ
- Ուրախ մաթեմատիկա
- Ես ի՞նչ գույն ունեմ
- Արի ստեղծենք պատմություն
- Դասակարգիր կենդանիներին
- Դասակարգիր զույգ և կենտ թվերը
- Դասակարգիր պարագաները

7. **Ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ**

8. **Խելամիտ հարմարեցումներ**

*Հաշվետու ժամանակաշրջանում Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից սպասարկվող 88 ուսումնական հաստատություններում տրամադրվել է խելամիտ հարմարեցումներ, որից 25 -ը ՆՈՒՀ-երի, 63- ը դպրոցների: Խելամիտ հարմարեցումներ է տրվել ընդհանուր թվով 849 սովորողի ՝ 118 ՆՈՒՀ-ի, 731 -ը դպրոցի:*

9. **Միջոցառումներ**

1. «Կյոր սեղան աուտիզմի միջազգային օր»
2. «Աուտիզմի միջազգային օրվան նվիրված 1 շաբաթյա իրազեկման աշխատանքներ»
3. «Սուրբ Զատիկ»

Сканировано с CamScanner

4. Ընտանիքի միջազգային օրվան նվիրված միջոցառում «Ընտանիքը որպես կյանքի ուժ»
5. «Անվտանգ և ապահով կրթական միջավայրը մեր դպրոցում» Էքսպո -մրցույթ 2026
6. Շիրակի ՏՄԱԿ- ի Մենք +ես +ես... թաթերախմբի Նոր ներկայացումը «Մեղվի դատը»
7. «Սպորտլանդիա» ընտանեկան միջոցառում
8. Հունիսի 1 « Երեխաների պաշտպանության միջազգային օր»:
9. Ստեղծագործական միջոցառում «Լոգոպեդական Գյումրիկներ»
10. «Տիկնիկագործություն սոցիալական մանկավարժների ձեռքերով»
11. Հանդիպում -քննարկում «Լոգոպեդի մասնագիտական կարգավիճակի իրավական և կրթական կարգավորումները Հայաստանում: Մասնագիտական էթիկա»
12. Բակային ճամբար 9-12 տարեկան թվով 25 երեխաների համար:

**10.Համագործակցություն**

*Հաշվետու ժամանակահատվածում սերտ համագործակցություն է իրականացվել Շիրակի ՏՄԱԿ-ի կողմից սպասարկվող ուսումնական հաստատությունների, ՆՈՒՀ-երի, ՄԿՈՒ-ների, ՏՄԱԿ-ների, Շիրակի մարզպետարանի «Առողջապահության, կրթության և ընտանիքի իրավունքների պաշտպանության» բաժնի, Գյումրու քաղաքապետարանի կրթության բաժնի, Շիրակի պետական համալսարանի, հասարակական կազմակերպությունների՝ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, ԱՕՍ հիվանդանոցային դպրոցի, «Փյունիկ» ՀԿ-ի, «Ֆրանսիական լույս» ՀԿ, Նռանե ՀԿ-ի, «Նոր լույս» ՀԿ-ի, Մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի վերականգնողական բաժանի, Նռանիկ զարգացման կենտրոնի, Շիրակի մարզի երեխային և ընտանիքի աջակցության կենտրոնի, «Արևամանուկ հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամի» (ՀԱՀ), «Ազատ» ՀԿ-ի, ԼԽՈւԵ կրթահամալիր, «Երեխաների զարգացման միջազգային կենտրոն» (ICDC)-ի, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի «Հարմոնի Խոսքի թերապիա և ախտորոշում» կենտրոնի, «Ունակ» վերականգնողական կենտրոնի, « ՍՕՍ-Մանկական Գյուղեր » ՀԲՀ, Աուտիզմի ազգային հիմնադրամ «Իմ Ուղի» (My Way) կենտրոնի և այլ հաստատությունների հետ: ՏՄԱԿ-ի մասնագետների համար իրականացվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, որոնք նպաստել են մասնագիտական կարողությունների զարգացմանը: Իրականացվել են արդյունավետ աշխատանքներ՝ ուղղված ներառական կրթության իրականացման արդյունավետության բարձրացմանը և մարտահրավերների հաղթահարմանը:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի հունվար ամսվա լավագույն հատուկ մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի հատուկ մանկավարժ Սեդա Կարապետյանը:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի փետրվար ամսվա լավագույն հատուկ մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի հատուկ մանկավարժ Աննա Էլչարյանը:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի փետրվար ամսվա լավագույն սոցիալական մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի սոցիալական մանկավարժ Իրինա Ավդալյանը:*

Сканировано с CamScanner

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի մարտ ամսվա լավագույն սոցիալական մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի սոցիալական մանկավարժ Նունե Ուռուտյանը:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի մարտ ամսվա լավագույն հոգեբան ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի հոգեբան Լուիզա Պետրոսյանը:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի ապրիլ ամսվա լավագույն հատուկ մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի հատուկ մանկավարժ Անժելա Ենոքյան:*

*2026 թվականի ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույնները» մրցույթի մայիս ամսվա լավագույն հատուկ մանկավարժ ճանաչվել է Շիրակի ՏՄԱԿ-ի հատուկ մանկավարժ Սեդա Համբարյան:*

Կենտրոնի անվանումը՝ «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Թագուհի Վարդանյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01» « հուլիս » 2026թ.

Сканировано с CamScanner